Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012,
Վաղարշյան 8/1
հեռ (374 10)260 964
www.grantthornton.am

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի մասնակիցներին և Խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը **2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**, այդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները՝ քաղված «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 17 ապրիլի 2013թ-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով ինչպես և աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացված ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 «*Ամփոփ*

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կարծիքով 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «Պրոմեթեյ Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Տնօրեն-բաժնետեր Գագիկ Գյուլբուդաղյան
Աուդիտի ղեկավար Արմեն Վանյան

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
17 ապրիլի, 2013թ.
ք. Երևան